


Ա. ՑԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՁԱՐԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Համայն Քրիստոնէութեան մայք սրբատեղոյն՝ Երուսալէմի Ա. Ցարութեան Տաճարի վերանորոգութիւնները փութով յառաջ կը տարուին։ Եկեղեցւոյն սեփականատէր եւ իրաւակից Հայ, Յօն եւ Կաթոլիկ երեք համայնքներու ծախքով եւ առաջնորդութեամբ ոչ միայն Կամբապեղուի Տաճարի կառուցը, այլ մանաւանդ կը վերահաստատուի անոր միջնադարեան շքեղութիւնը, կը բացուին դարերէ ի վեր փակուած կոմարներ եւ պատուհաններ, ու Տաճարի խոնա եւ մթասառուեր անկինները, կ'առատանան օգով ու լուսով։




Երկրորդ Գոդգարա. Խոյակ Ֆրու քանդակում։

Տաճարի գլխաւոր սրբատեղիները՝ Քրիստոսի Ա. Գերեզմանը եւ անոր վրայ կառուցուած բոլորաշէն մեծ եկեղեցին, Պատանասեղին ու իր շրջափակիր, մուտքի մեծ դարպանն ու գաւիթը, ըլլալով երեք համայնքներու մնկերովի սեփականութիւնը՝ կը վերանորոգուին երեքին ծախքով։ Մինչ մնացեալ մօտ 20 մատուռներք, պահք կը պատկանին երեք համայնքներէն մէկուն




Երկրորդ Գողգոթա - նորակերտ խոյակներ :



Ս. Յարութեամ Տաճարի հարաւոյշին քեւը եւ աւագ դուռը :

կամ միւսին՝ կը վերանորոգուին սեփականատէր համայնքին ծախսով։

Եստ այսմ, իրաւակից երեք համայնքներ համաձայնած էին որ ընկերութի սեփականութիւններէն առաջին առիթով նորոգուին մուտքի արտաքին ճակատը եւ ներքնամասը, ինչպէս նաև Պատանատեղույն շրջափակը, այսինքն ամբողջ հարաւային մեր Տաճառին։



Համաձայնած նորոգութիւն առաջ առ առողջապահութեան մորոգութ վերանականացնելու համար կամ միւսին ծախսով։

Գոհոնակաթեամբ կը հազորդենք թէ այս օրերուն արդէն իսկ վերջացած են հարաւային թեւին պէքօն արմէ շղթաներով ներքին ամրացումները եւ հետեւարար վերցուած՝ մուտքի ճակատին վրայ վետեղուած ապահովութեան երկաթեայ յինարանամբացումները։

Նժանապէս վերջացած ըլլալով Պատանատեղույն վերնա-

ժամի, այսինքն Հայկական Վերնատան եւ Պատանատեղւոյն առաստաղի վերանորոգութիւնները, վերցուեցան նաեւ այս մասին փայտեայ-երկաթեայ ամրացումներն ու լաստակները:

Այժմ երեք համայնքներու ընկերովի վերանորոգութեան գործը կեդրոնացած է Պատանատեղւոյն առաջին յարկին, ինչպէս նաեւ մուտքի արտաքին ճակատին վրայ:

Ընկերովի այս վերանորոգութիւններէն անջատաբար, իւրաւակից երեք համայնքներ կը շարունակէն վերանորոգութիւնները այն մատուռներուն, որոնք իրենց համայնքային սեփականութիւններն են միայն: Այսպէս:

Հայեր գրեթէ աւարտած են երաշխաւորի Մատուռին վերանորոգութիւնները եւ մօտ է աւարտը նաեւ երկրորդ Գողգոթայի Հայկական Մատուռին:

Յոյներ կը շարունակէն Աշխարհամատրան Տաճարի, ինչպէս նաեւ հիւսիսային թեւի իրենց սեփական մասերու վերանորոգութիւնը:

Լատիններ կ'ամբողջացնեն իրենց Զարչարանաց Եկեղեցոյն եւ Վերնատան վերանորոգութիւնները եւ աւարտած են Խաչի Դիւտի քարայրին վերանորոգութիւնը:

Ինչպէս միւս երկու համայնքները, Հայեր եւս ունին նորոգութեան վերահսկիչ յանձնախումբ մը, բազկացած Միաբան Հայրերէ, որոնք նորոգութեան գործին ընթացք կու տան հսկողութեամբ եւ ցուցմունքներով Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հօր: Նորին Ամենապատութիւնը շատ յաճախ կ'այցելէ Ս. Յարութեան Տաճար եւ անձամբ կը կատարէ անհրաժեշտ քրնաւթիւնները:

Կ. Վ. Գ.